

ձառութեանց և ուսումնական մարդու գիւտութեամբը զինուած՝ յաջողօրէն մշակած է մանկավարժուական — հոգեբանական կարգ մը խնդիրներ, և ծանրացած է դաստիարակուած ճնողներու պատրաստութեան պէտքին վրայ:

Երանի՛ թէ այս զիրքը հայերէն ոչ զրուած ըլլար որպէսպի կարենար կարտացուիլ Հայ ճողովուրդին մնե զանգուածին մէջ, որ Փառանսերէն չի զիտէր:

Գէորգեանի զիրքին նշանակութիւնն ու որժէքը զնահատուած է արդէն Պրօֆ. P. Boevetի Յառաջարամին մէջ, որմէ հաճուքով յասաջ կը բերենք հետեւեալ տօղիը. — «Պր. Գէորգեան յանդպնութեամբ և իսկատիպութեամբ մըն է որ իբրև անժխտելի իրողութիւն հայրական բնազըը քով քովի կը դնէ մայրականին հետ և միւեւնոյն շեշտով կ'ուղղէ իր խօսքը ապագայ Երկու ճնողներու: Գէորգեան այնպէն մը կ'արգարացնէ այս կիրալը որ ուշագրաւ է իր բոլոր Ընթերցողներուն համար, ան ծընողաց պատասխանատրութիւնը կը հիմնէ օրինակին ազդուութեան վրայ: Իր այս հաւասարումը ոչ ոք պիտի ժիտէ ։ Գէորգեան, որուն շատ ընկամիչ դրական զարգումը չէ ցամքեցուցած իր Ընթերցողի հաշակը: Իր անձնական խորհրդածութիւնները չընապատած է շատ մը ուշագրաւ մէջրերումներով: Խոքն ալ, եթէ լու հասկըցած նմ իր միտքը, կ'ուղղէ այսօրուան ու վազուան ճնողներուն փառասիրութիւն մը ներչնչէլ, զանոնք լաւ դաստիարակ ընելու համար, այսինքն բազանք մը շարունակ նոյն խոկ ճնողները դաստիարակելու: Ճնողաց զիտութիւնը իր այս ներշնչուումով անօգուտ ըլլալու վատանքը չունի նոյն ինքն Պր. Գէորգեանի աշակերտներէն անոնց որ ամուրի պիտի մնան (էջ 9-10):

Բ. Ե.

ՍԻՐԵՆ ԼՈՒՍԱՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ


Նյուտոննայց եկեղեցւոյ կանոններուն նակառակի է օծալ նարի վրայ Ա. Պատուազ մասուցման, մեր օրամտքամ մէջ ապացոյցներ կա՞ն շարժական սեղմներ կանգնեցու և Ա. Պատուազ մասուցման վիճակներուն մէջ եւ կամ ուր ու մասուա կամ եկեղեցի չկայ, եւ կամ պահներու մէջ:

Այսպիսի հարցումներ ուղղուած են Այսինին հոյ զազթավայրիքէն, նկատելով որ օմանք կանոնի հուկառակ է ըսած ևն օծեալ քարի վրայ Ա. Պատարագ մատուցածներ և ժիտուածներու վրայ Ա. Պատարագ մատուցածներ, ըլլայ զինուորական բանակներու մէջ, ըլլայ գաշտացին կամ լեռնային վայրին մէջ, երաշտութեան և մահուածամբներու ատեն, ինչպէս նաև տաճամանակիայ կերպով եկեղեցիի վերածուած շնչքերու մէջ:

Առանց այլեւայիլ պիտի ըսենք թէ Հայաստանիաց Եկեղեցւոյ կանոններուն համաձայն է շարժական սեղան կանգնել և օքնեալ քարի ևւ նոյն խոկ օքնուած սեղանակտաներու վրայ Ա. Պատարագ մատուցածներ, ըլլայ զինուորական բանակներու մէջ, երաշտութեան և մահուածամբներու ատեն, ինչպէս նաև տաճամանակիայ կերպով եկեղեցիի վերածուած շնչքերու մէջ:

Պատմական գաղեմի յիշտատակութիւններէն ունինք Վարդանանց պատմագիր Եղիշէն, որ կ'ըսէ թէ պատերազմին զիւերը Ա. Ղեւոնդ քարոզից, յետոյ սեղան կանգնեցին և կատարեցին ամենասուրը խորհուրդը, ինչպէս նաև մլրտութեան աւազան ևլ պատրաստեցին և զինուորներէն անկնունքները մկրտեցին զիւերն ի բուն և առոտուն ալ ամէնքը սուրբ հաղորդութիւն առին, այսինքն՝ երկու գլխաւոր խորհուրդները (Միւրտուրիւն և Հաղորդուրիւն) կատարեցին Վարդանանց բանակին մէջ, պատերազմի դաշտին վրայ, այն ալ գիւշերը:

Եղիշէն լեզուով. — «ցայս վայր խօսեցաւ ի զիւերին յայնմիկ սուրբ երէցն Դեւոնդ, և փառատրելով կատարեաց զԱմէնն ասելով: Եւ սեղան ուղղեալ (Ա. Պատարագի համար սեղան կանգնելով) զամէնասուրը խորհուրդները (Միւրտուրիւն և Հաղորդուրիւն) կատարեցին Վարդանանց բանակին մէջ, պատերազմի դաշտին վրայ, այն ալ գիւշերը:



բուն (զինուարներուն մէջ չմիտուածները կամ անկնունքները՝) զգիչերն ամենայն մկրտեցին. և ընդ առաւօտո սուրբ օրինացն հաղորդեցան (առաւուն ալ հաղորդութիւն առին), և այնպէս լուսազգեատ եղին որպէսի տերունեան մեծի սուրբ Զատակին» (Եղիշէ, Երգ Յեղ. ին վերջը):

Եղիշէի պատմածը այնքան յստակ և այնքան սովորյ է որ ինքնին աւելորդ կը դառնայ ունէ մեկնութեւն կամ առարկութիւն:

ԺԴ. զարուն սկիզբն ալ խնդիր մը կը յուզուի այս և ուրիշ կանոնական կէտերու մասին Զաքարէ Սպասաւարի և արևելեան վարդապետներու միջև, որոնց զլուխը՝ Մխիթար Գօշ:

Վարդան պատմիչ կ'ըսէ թէ Զաքարէ կ'ուզէր որ հայ բանակն ալ ունենար իր շարժուն և չըջուն եկեղեցին Վրաց բանակին պէս. վասնդի Վրաց զունդերը իրենց քահանաները ունէին և ամէն տեղ պատարագ կը մատուցանէին, և ինքն Զաքարէ չունէր սկիզբեցի ի անապարհին. որովհետեւ Հայք շատ տանէ ի վեր չունէին այդ սովորութիւնը Պարսից և Խամայելացոց բոնութեան հետեւանքով: Այս պատճառով Վիրք կը նախատէին Հայերը ըսկելով թէ զուք ճամբռու յատուկ եկեղեցիներ չունիք. անհաջորդ կը մնաք, և Հայոց տօնակատարութեան մասին ալ կարգ մը զիտողութիւններ կ'ընէին և կը վշտացնէին հայ զինուորները: Զաքարէ այս անպատճառւթեան վերջ տալու համար զիմեց Մխիթար Գօշին, ժամանակին ամէնէն հեղինակաւոր վարդապետին, որ միանդամայն իր խոսափանահայրն ալ էր, և հարցուց թէ երրեք հայ թագաւորներ և իշխաններ ճամբռու համար եկեղեցի, պաշտօնի և պատարագի յատուկ բան մը չե՞ն ունեցած: Ուրիշ վարդապետներուն ալ հարցուց նոյն բանը, ամէնքնն ալ հաստատական պատասխան տուին ըսկելով թէ Տրդատ թագաւորի ատեն վրան և սեղան կը չըջեցնէին արքունիք բանակին մէջ, Վարդանանց ատեն ալ մկրտութիւն և հաղորդութիւն կը կատարէին բանակին մէջ:

Այսուամենայնիւ Մխիթար Գօշ խորհուրդ տուաւ Զաքարէին որ կաթողիկոսին և Լեռն թագաւորին զիմէ այդ վաղեմի սովորութիւնը վիրահաստատելու համար

իր բանակին մէջ. վասնդի ինքն խոհեմութիւն համարեց ուղղակի իր կողմէն չընել այդ կարգագրութիւնը, ինչորէս կ'երեւի իրերու ընթացքէն, որպէսզի Վրաց հառեւած ը՛ՌԻԱՅ, որտնք քաղկեցոնիկ էին և ինքն կրնար չարախօսուիլ իրրեւ քաղկեցոնիկ զոնիկներու համաձայնոր մը:

Վերջապէս Զաքարէ զիմեց կաթողիկոսին և թագաւորին որտնք եկեղեցական ժողով մը զումարեցին և արտօնութիւն հին սովորութեան վերահաստատումը Զաքարէի բանակին մէջ. իսկ Յովհաննէս կիմզ. Միւծարայու (1203-1220), որ «վրան մի զմբեթարք եկեղեցածե» շինել տուաւ և Միւնաս եպիսկոպոսի մը զիմաւորութեամբ կողմուած պատգամաւորութեան մը ձեռքով զրկեց զայն Զաքարէին, որ մէծ հանդիսաւորութեամբ առաջին պատարազը մտաւ ցանկացանել տուաւ այդ եկեղեցածե զմբէթաւոր վրանին տուկ և այդ առթիւ ալ ժամանակին վարդիս երաժիշտներէն Տարօնիցի եւաչաւութիւր վարդապետ զրկեց և երգեց Առանուրդ խորինը, որ մինչեւ հիմոյ կ'երգուի պատարազիներու զգհստաւորման տան:

Աւելի հին ատեններ նոյն իսկ օրհնուած սկզբանակատաներու վրայ Ս. Պատարագ մտաւցուած է (Դիմիք բլրոց, էջ 156) փոխանակ վկա յարի:

Իսկ երաւազէմի մէջ, զոր օրինուկ Զիւթենեաց լրան վրայ, արարին երկու անզամ մինք. Ս. Պատարագ կը մատուցանենք վէմքարի վրայ:

Ասկից զատ նազարէթի որբանոցին մէջ միշտ Ս. Պատարագ կը մատուցուէր վէմքարի վրայ:

Եւ այսօր Հայֆայի Ս. Եղիսա մտարան մէջ, որ վարձուած տուն մըն է և իրրեւ եկեղեցի չէ օծուած, Ս. Պատարագ կը մատուցուի վիմբարի վրայ:

Հետեւարար ուր որ օծեալ եկեղեցի և մտաւու չկայ, հոն Ս. Պատարագը կրնայ մտաւցուիլ վիմբարի վրայ:

Միայն մէկ անպատճառ թիւն կայ որմէ պէտք է զուշանաւ զաղթավոյրերու մէջ, մանաւունդ Ամերիկայի մէջ. այսինքն պէտք է ուշազրութիւն ընել որ Ս. Պատարագ մատուցուիլք տեղը կամ սրահը մանուր ըլլայ: Եթէ այդ տեղը կամ սրահը կը զործածուի զայթակղելի հաւաքումերու, պէտք չէ այդպիսի տեղեր ընտրել. մայուր

ստորագելին ամէն բան կը բացատրէ արագէն, և մենք վստահ ենք որ հայ ճազու գուրզը ոչ միայն երկիւղած և կրօնասէր է, այլ նաև ոչջմիտ, այնպէս որ ամէն ըլլզուշթիւն և հազարազութիւն կ'ընէ, որպէս զի հազորդութիւն Սուրբ Աստվածաբարդուած ՀՄԱՅ անմայր միջավարի մը մէջ:

Այս գուշտ թիւնը ջերմապէս կը յանձնարարենք այն բոլոր հայ զազութիւներուն, որոնք գուրկ են իրենց ուժական սրբավայրներէ և ստիգմուած են յարմար սրբնի մէջ կոտարիւ հոգեւոր պաշտամունք և Ա. Պատարագ:

Եմբազրութիւն ՍԻՐՆԻ

Ա Խ Ա Ն Բ Զ

Արտասնուած Առնարայացի Հայ Ազգային Վարչութեան նախագահ Գ. Հարցավէ Յանկուրիանի կողմից՝ Պարվա - Հնդկաստանի Հայոց բանակալ Առաջնորդ Գեր. Մերակ Արշակնականութեան կողու Տիւլիկանամ - Մազիստրափ ճնշդեան սարկարանի և մնենումի սորին:

Երբին Բարձր Սրբազնութեան
Տ. Մեսրոպ Արքեկապ. Տէր-Մազսէսեան-
Մազիստրոս, Բարիկնամ առաջնորդ
թեմի Հայոց Պարսկա - Հնդկաստանի
Աստ

Գերազատիւ Հայր,

Առւրաբոյացի Հայ հաստրակութիւնը չափազանց բախտաւոր է համարում իրեն որ պատեհութիւն ունի այսօր տանիւլու ձեր ճնշդեան տորեկարձը և այդ առթիւ այստեղ հաւաքուած մասուցանելու Զեղ իւր յարդանքներն ու մեծարանքները:

Թոյլ առուէք, խնդրեմ, հասարակութեան կողմից խնարճարար չնորհաւորել Զեղ նոյն տօնը և մաղթելու ձեզ երկար և բարեկաստիկ օրեր, առողջութիւն, ոյժ և եռանդ, զես երկար տարիներ չարւնաւունք, զես երկար տարիներ չարւնաւունք և մեծարանքները Զեղ անձնուէք զործունէութիւնն ու նուրբական առաքելութիւնն:

Երբեմ զայդն փոխարինութիւն այն եւ ունդուն և բազմաւոր զործունէութեան որ զուք ցոյց էք տուէլ Պարսկա - Հնդկաստանի Հայոց ընդարձակածաւալ թեմի ձանր և պատասխանաւոր պաշտօնը Զեր ստանձնելու օրից, թոյլ առուէք, խնդրեմ, մատուցանելու Զեղ՝ քաղաքիս հայ հասարակութեան կողմից մի փոքրիկ նուէր, որը բարեհաճիցէք զործադրել ըստ Զեր հայեցագութեան:

Զեր այստեղ ժամանելու օրից մինչեւ այսօր զուք իրեմ քաջ հովուապես, իրեմ հարազատ պատգամարեր և իրեմ սիսուկ Հայուստանի, չդադարեցիք շարունակաբար՝ Ա. Եկեղեցոյ բեմից քարոզութիւններով, զասախօսութիւններով և մասնաւոր խօսակցութիւններով Զեր զօրեղ և հեղինակաւոր ձայնով հազորզել Զեր պանդուխտ զաւակներին մերթ ուրախ և մերթ ախուր լուրեր, պատգամներ և տեղեկութիւններ մեր վերաշնուրող հայրենիքի, Մայր Ամուսին և հայրենակիցների մասին, որոնք, սական, բոլորովին տարբեր էին մեր ցարդ լուծներից՝ իրենց հարազատութեամբ, ճշդութեամբ, քաղցրութեամբ և վիհանեամբ:

Դուք Զեր համոզիչ և փաստային խօսքերով հանդպատացրիք մեր խոռվուած սիրտերն ու յուզուած միտքերը և վճիռ կերպով պատկերացրիք մեր առաջ մեր նորաբողոջ հայրենիքի քաջալերիչ ներկային և պայծառ և փառաւոր հեռանկարը, և վերջապէս թէ՛ հաւատացեաններին և թէ՛ թիրանաւատներին համոզեցիք թէ կայ մի հայրենիք, որով կարելի է պարծենալ և հըպարտանալ և որը վերաշնուրեան ուղիղ ճանապարհի վրայ է գանւում, Մի խօսքով, ձեր նշանաբանն էք սամէն բան հայրենիքի համար:

Որոշնետեւ թերեւս այսօր վերջին անգամն է օր պատեհութիւն ենք ունենում հրապարակաւ խօսելու Զեղ հայ, Զեր մօս օրիրում տեղիցս մեկնելու պատճառավ, թոյլ առուէք, խնդրեմ, քաղաքիս Հայ հասարակութեան կողմից յոյտնելու Զեղ խորին երախտազիտական զգացումներ Զեր հովուապետական այցելութեան և Զեր հայրենակարաստ զաւակներին հոգեպէս և ազգայնապէս միտթարելու համար։ Զեր այցելութեան յիշատակը միշտ